ԿՈՆԴԱԿ ԹԷՈԴՈՐՈՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

ՄԵՅՍ մեր գիր հոգեւորական բարձր հրամանի հաստատութիւն է և աւրհնութիւն թեոդորոսի ծառայի ծառայիցն Քրիստոսի Տեառն մերոյ․ Շնորհաւք և ողորմութեամբ Նորին եպիսկոպոսապետի Մեծաց Հայոց և պատրիարգի ամենայն Արեւելից [1]․ Զոր աւրհնութեամբ և հայրական հոգեբարձութեան գթով՝ գրեմք ի յամէնօրհնեալ և յաստուածապահ յանուանի և յականաւոր թագաւորանիստ քրիստոսական մայրաքաղաքն ի Լոռի և յամենայն վիճակն իւր բոլորովին․ ի Սերաթն, ի Զիչոյն, ի Կամենեցն ; ի Լուցկայն, ի յԱւլատէմուրն, ի Մանքրման, ի Վրլախաց երկիրն և ի Պտինն, ի յԸնկիսալայն, և ի յայլ ամենայն թէմն իւր առ հասարակ։ Մեր ի Քրիստոս Աստուած հաւատարիմ ըստ հոգոյ յոյժ սիրեցեալ ցանկալի և պարծանաց որդւոցդ․ պատվական և սրբասէր քահանայիցդ, աստուածասէր և բարեպաշտ Պարոնացդ և ավագաւորացդ, փառաւոր խաճանոյդ և Պուռճէսնոյդ [2], իմաստուն վաճառականացդ, հարկեւոր և բարեգործ տանուտրացդ, ձեռնահմուտ արուեստագետացդ, աշխատասէր հողագործացդ․ և ամենայն հայասեռ և քրիստոսադաւան մերոց ժողովրդականացդ, արանց և կանաց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից, մեծամեծաց և փոքունց, և ամենայն չափո հասակի։ Որոց այդոցիկ ամենեցուն ի միասին առ հասարակ մեծավ փափաքմամբ, կարողութեամբն Աստուծոյ Հաւր, զաւրութեամբ Որդւոյն միածնի Յիսուսի Քրիստոսի, ի ձեռն Հոգւոյն Սրբոյ, առաքեմք ողջոյն սիրո ի մէնջ և աւրհնութիւն առաքելական․ ի յաս-

1․ Շատ մեծ և նշանաւոր տիտղոս, չգիտեմ թէ մեր ուրիշ կաթողիկոսք այլ գործածած են զայս, ըստ ոմանց ասորի կամ քաղդէացի պատրիարքաց, որք յԱնտիոք նստելով՝ կիրենք Արեւելից պատրիարք կ'անուանէին․ երբ գի քանի որ ի սկզբան միայն երեք էին պատրիարքունք, Հռովմայ, Աղեքսանդրիոյ և Անտիոքայ, առ Ասիոյ կամ Արեւելից եկեղեցական գլուխն էր․ երբ յաւուրցն պատրիարքունք անհամաձայնք ի դաւանութեան, ամեն յԱնտիոք նստողք՝ այն նախնական տիտղոսն այլ իրենց սեփականեցին, այդ մեծ և ընդարձակ կոչմամբ Օրիէնդ Արէւելէց՝ Հայաստան այլ ըստ հին երեք բաժանման աթոռոցն՝ Անտիոքայ պատրիարքութեան վերաբերեալ էր․ երբ ինքնագլուխ եղաւ՝ նման ուրիշներու, թուի թէ Թէոդորոս օրինաւոր համարած է զինքն այլ այնպէս կոչել, կամ թողուլ որ իր դպիրն կամ կոնդակագիր՝ այնպէս գրէ ի սկզբան․ բայց ինքն իր յատուկ ձեռօք ստորագրած է կաթողիկոս Օրիէնդ Հայոց, որպէս էր, և ոչ Օրիէնդ Արէւելէց, որոց չէր։

2․ Դեռ Հայոց Կիլիկիոյ Ռուբինեան հարստութեան չոշորդ կայ, հազիւ երկվեցեակ տարի անցեր էր տէրութեան վերջանալէն, և դեռ ողջ էր Լեւոն Ե․ անոնց քաղաքականօրէն արեւմտեայց նմանողութեան նմուշիկ մ' է այդ Պուրժէսդ (Bourgeois), յոգնաքար Պուրժէսնէ։